

**ՀՀ ԱԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**



**ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ**

ԵՐԵՎԱՆ 2014



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բարձրագույն կրթությունը, ինչպես ցանկացած կրթություն ընդհանրական, բազմաչափ ու բազմաբովանդակ գործընթաց է դասավանդողների և սովորողների փոխադարձ հարաբերությունների վրա:

Կրթության որակը բուհի կրթական գործունեության համապատասխանությունն է պետական չափորոշիչների, ուսումնառողի, հասարակության սոցիալ-տնտեսական և մշակութային պահանջներին:

Որակի ներքին ապահովումը կախված է բուհի կառավարման համակարգի կատարելությունից և ճկունությունից, բուհի առաքելությունից, նպատակների և խնդիրների հստակեցումից, մասնագիտական կրթական ծրագրերի որակից, պրոֆեսորադասախոսական կազմի գիտական և կրթական ռեսուրսից, նյութատեխնիկական պայմաններից, ուսանողության մակարդակից, ֆինանսական վիճակից:

Որակի ապահովման հիմքում դրվում են հետևյալ չափանիշները՝

- կրթական գործընթացի կազմակերպման չափանիշներ (բուհի կառավարում և ենթակառուցվածքներ, որակի ապահովման, գնահատման և մշտադիտարկման

մեխանիզմների առկայություն, ֆինանսներ),

- կրթական գործունեության պայմաններ (մասնագիտական կրթական ծրագրեր, կադրեր, կրթական ռեսուրսներ),
- կրթության բովանդակություն և կրթական արդյունքներ (ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին, որակավորումների ազգային շրջանակին համապատասխան բակալավրի, մագիստրոսի կրթական արդյունքների ապահովում, շրջանավարտների աշխատանքի տեղավորման աստիճան և այլն):

Կրթական ծրագիրը, դա կրթության համապատասխան մակարդակի բովանդակությունն ու մասնագիտական ուղղվածությունն է:

Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգերը պետք է ներառեն հստակ և համապարփակ գործընթաց, որը վկայում է, որ քննարկվել և նկարագրվել է հետևյալը.

- ծրագրի հայեցակարգը և նպատակները,
- ծրագրի համապատասխանությունը հաստատության առաքելությանը և ռազմավարական պլանին,

- ծրագրի խնդիրները, առարկան և մոդուլները,
- ծրագրի, ինչպես նաև յուրաքանչյուր դասընթացի և մոդուլի ակնկալվող կրթական արդյունքները,
- պլանի համապատասխանությունը նշված նպատակներին և ակնկալվող կրթական արդյունքներին,
- ուսուցման ձևը (առկա, հեռակա) և ECTS կրեդիտներով արտահայտված բեռնվածությունը,
- կրթական արդյունքներին համարժեք դասավանդման և ուսումնառության մեթոդները,
- կապը հաստատության այլ ծրագրերի հետ,
- ապագա զբաղվածության (աշխատանքի տեղավորման հնարավորության) խնդիրները,
- ծրագրի համապատասխանությունը Հայաստանի, եվրոպական և համաշխարհային աշխատաշուկաների պահանջներին,
- ծրագրի կառավարման խնդիրները,
- մարդկային անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը,
- անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսները,
- ծրագրի ազդեցությունը մասնագիտական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական ենթակառուցվածքների զարգացման վրա,
- անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը,

- այլ մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող համանման կամ հարակից ծրագրերի միջավայրային վերլուծությունը,
- ծրագրի պահանջվածությունը սովորողների կողմից,
- ծրագրի վերաբերյալ համապատասխան շահեկիցների և մասնագիտական շրջանակի հետ խորհրդակցությունների անցկացումը,
- սովորողների գնահատման արդարացի, հիմնավորված և չափորոշիչներին համապատասխանող ներդրված մեխանիզմները,
- մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության դադարեցման դեպքում սովորողների շահերի պաշտպանության մեխանիզմները,
- սովորողների ընդունելության, առաջադիմության և փոխադրումների բավարար մեխանիզմները, որակավորումների ազգային շրջանակին համապատասխան դիմալրմի հավելվածը և այլն:

